Հայաստանում կենդանական ծագման սննդամթերքի և անասնակերի անվտանգության վերահսկողության հզորացում

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ	սանիտարական և բուսասանիտարական
Տևողությունը	18 ամիս
Իրականացման ժամկետ	ապրիլ 2012 –*հունվար* 2014
Բյուջե	1 մլն եվրո

Շահառու մարմին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

ԵՄ անդամ պետությունների գործընկերներ

Գլխավոր գործընկեր՝
Նիդեռլանդների սննդամթերքի և սպառողական ապրանքի անվտանգության մարմինը

Կրտսեր գործընկերներ՝
Դանիայի անասնաբուժության և սննդամթերքի կազմակերպություն
Լատվիայի սննդամթերքի և անասնաբուժության ծառայություն

Ծրագրի նկարագիր

Նպատակ: Նպատակն է ամրապնդել համապատասխան ՀՀ հաստատությունները՝ ԵՄ լավագույն պրակտիկային և միջազգային ստանդարտներին համապատասխան կենդանական ծագման սննդամթերքի և անասնակերի անվտանգության վերահսկողության համակարգերի արդիականացման և սննդամթերքի անվտանգության մասին սպառողների իրազեկվածության բարձրացման միջոցով:

Բաղադրիչներ:

Բաղադրիչ **I:** Օրենսդրական հիմքերի զարգացում
Բաղադրիչ **II**: Տեսչական ստուգման կարգը
Բաղադրիչ **III:** Ինստիտուցիոնալ կառուցվածքի զարգացում
Բաղադրիչ **IV:** Իրազեկման բարձրացում

Ձեռք բերված արդյունքներ

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները հետևյալն են՝

ա) Ընդունվել են ՀՀ կառավարության վեց որոշումներ (ներառյալ մեկ՝ օրենսդրության մոտարկման ծրագիր), ՀՀ կառավարության տասը որոշումներ ուղարկվել են ՀՀ վարչապետի հաստատմանը, երեք նոր օրենք և մեկ օրենքում լրացումներ/ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ ուղարկվել են ՀՀ կառավարություն՝ հետագայում ՀՀ ազգային ժողով ներկայացնելու նպատակով, ընդունվել են Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության 10 ներքին իրավական ակտեր և Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից ընդունված 21 ստուգաթերթեր,

բ) փոփոխվել են ընթացակարգերը, մեթոդաբանությունները, փորձաքննության պահանջները, ընդունվել են ստուգման փորձի վերաբերյալ համապատասխան իրավական ակտերը,

գ) ծրագրի օժանդակությամբ նախագծվել են ներքին կառուցվածքը, գործառույթները, իրավասությունների պահանջները: Կատարվել են աշխատակազմի համար անհրաժեշտ բոլոր վերապատրաստումները,

դ) սննդամթերքի անվտանգության ռազմավարության իրականացման համակարգող խորհուրդը ստեղծվել է 2012 թ. նոյեմբերին վարչապետի որոշմամբ,

ե) տեսչության ինտերնետային էջը բարելավվել է՝ նպատակ ունենալով հասարակությանը, գործարարներին նշահագրգիռ կողմերին տեղեկացնել տարածքում տեղի ունեցող զարգացումների նկանոնակարգերի նգործելակերպի մասին: Ծրագրերի հրապարակային նյութերը տեղադրված են կայքում:

Լրացուցիչ տեղեկատվություն